

Շատախոս կոշիկը

Կար-չկար, մի շատախոս կոշիկ կար: Աջ ու ձախ նա անընդհատ պատմում էր այն ճանապարհների մասին, որտեղով անցնում էր: Բայց շատախոս լինելուց բացի, նա նաև մի քիչ գլուխգոլման էր: Միայն գեղեցիկ ճանապարհների մասին էր պատմում:

Մի օր էլ, քարերը որոշեցին պատժել նրան, քանի որ իրենց մասին նա չէր պատմում երբեք: Քարքարոտ մի ճանապարհի վրա կոշիկի թաթը սոսնձից պոկվեց: Հերիք չի որ շատախոսուժայունից բերանը հագիվ էր հասցնում փակել, հիմա արդեն դա էլ չէր կարողանում: Հենց լռում էր, բաց բերանը փոշի ու կեղտ էր լցվում: Կոշիկը հասկացավ, որ պետք պետք է բերանը փակ պահի ու չխոսա, որ մաքուր մնա: Նա դադարեց խոսելը: Հիմա միայն անհրաժեշտության դեպքում էր ինչ-որ բաներ ասում: Մի քանի օր շատախոս կոշիկը պարապ մնաց, ոչ մի ճանապարհի չգնաց, մինչև նրա տերը որոշեց նրան տանել «բժշկի»՝ կոշկակարի մոտ:

Կոշկակարը խնամքով մաքրեց կոշիկը, սոսնձեց այն ու գերազանց վիճակում վերադարձրեց տիրոջը: Կոշիկի տերը ուրախ-ուրախ հագավ իր փայլփլուն կոշիկները և ճանապարհի ընկավ:

Այս անգամ արդեն ամբողջ ճանապարհին կոշիկը միայն քթի տակ ճռճում էր: Ու արդեն, երբ տուն հասան, կոշիկը սկսեց պատմել ոչ միայն սիրուն ու մաքուր ճանապարհների, այլ նաև քարքարոտ ու փոշոտ ճամփաների մասին:

Վ. Բուռնուլչյան